Հովհաննես Թումանյան

Սասունցի Դավիթ

3

XXI

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ աժդահա:
Սա էլ իմացավ համբավը կըռվի,
Մի բարդի ուսին գալիս է ահա:
Գալիս է՝ հեռվից բարձրը գոռալով.
Ի՜նչ եք վեր եկել էս դաշտի միջում,
Քանի գըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին որ չեք ճանաչում...

Բա չե՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.
Չըքվեցե՛ք, հիմի ուր որ է՝ կըգա,
Եկել եմ սըրբեմ մեյդանը էսօր:

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դավիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ ելե՛ք, կեցե՛ք,

Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք .
Զե՛նք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի եք թամբել՝ ելե՛ք, հեծե՛ք.
Հետո չասեք՝ թե մենք քընած
Դավիթ գող-գող եկավ, գընաց...

Էսպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Մըսրա զորքի մեջտեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կայծակին:

Զարդեց, փըշրեց մինչև կեսօր.

Կեսօր արինն ելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հազարավոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ:

Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարք տեսած ու բանագետ.
Տըղե՛րք, ասավ, ճամփա տըվեք,
Գընամ խոսեմ ես Դավթի հետ:

Գընաց՝ կանգնեց Դավթի առաջ,
Էսպես խոսեց էն ծերունին.
Դալար կենա՛, կուռդ, ո՛վ քաջ,

Սուրդ կըտրուկ միշտ քու ձեռին:
Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,

Հե՞ր ես սրրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր որդի,
Ամեն մինը մի տան ճրրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամփին, խեղճ ու կրրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,

Որը ծրնող աղքատ ու ծեր,
Որը լացով, քողն երեսին
Նորապրսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թրրով
Հավաքել է, էստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով
Մենք քեզ վրնաս ի՞նչ ենք արել:

Թագավորն է քու թրշնամին,
Կրռիվ ունես– իր հետ արա,
Հե՞ր ես քաշում Թուր-Կայծակին

Էս անճարակ խալխի վրրա:

Լավ ես ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավիթն ալևորին,
Բայց թագավորն ո՞ւր է հիմի,
Որ սև կապեմ նրրա օրին:

Մեծ վրրանում քրնած է նա,
Է՛ն, որ միջից ծուխը կելնի,
Էն ծուխն էլ հո ծուխ չի որ կա,
Գոլորշին է իր բերանի:

Ասին . դեպի մեծ վրրանը

Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քրշեց, գրնաց ու դրռանը
Գոռաց կանգնած արաբներին.

Ո՞ւր է, ասավ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցե՛ք, գա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գրրող չունի՝ գրրողն եմ ես...

Մելիքն, ասին, քուն է մրտել,
Օխտը օրով պետք է քրնի.
Երեք օրն է դեռ անցկացել,

Չորս օր էլ կա, քունը առնի:

Ի՜նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լրցրել ծովն արյունի,
Ինքը մրտել վրրանի մեջ՝
Օխտը օրով հանգիստ քրնի ...

Քրնել-մրնել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք շո՛ւտ, դուրս գա մեյդան,
Էնպես դրրան ես քրնացնեմ,
Որ չրզարթնի էլ հավիտյան:

Ելան՝ մարդիկ ճարահատված

Շամփուր դրրին թեժ կրրակին
Ու զարկեցին խոր մրրափած
Մրսրա-Մելքի բաց կրրնկին:

Օ՜ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիծված լրվի ձեռից,
Խոր մրրոընչաց հրսկան հանդարտ
Ու շուռ եկավ, քրնեց նորից:

Ելան, բերին մեծ գութանի
Խոփը՝ դրրին թեժ կրրակին,
Ու կաս-կարմիր, կեծկրծալի,

Շիկնած տրվին մերկ թիկունքին:
Օ՜ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրավ մոծակներից,
Աչքը բացավ հրսկան հանդարտ,
Ուզում էր ետ քրնել նորից:

Տեսավ Դավթին: Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մրոընչալով,
Փրչեց վրրեն, որ թրոցրնի
Էն աժդրհին մի փրչելով:

Տեսավ, տեղից ժաժ չի գալի,

Զարմանքն ու ահ պատեց հոգին:
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց.

Բարով, Դավի՛թ, հոգնած ես դեռ,

Ե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կրոիվ կանենք,

Եթե կրոիվ կուզես կրրկին...

Իր վրրանում բրոնակալը
Քառսուն գազ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վրրեն փափուկ խալի փրռել:

Ում որ հաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Ներստեցնում էր իր վրրանում
Էն կորստյան հորի վրրա:

Իշավ Դավիթ ձիուցը ցած,

Գրնաց նրստեց... ընկավ հորը.
Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խրնդաց
Մրսրա դաժան թագավորը:

Դե, թող հիմի գրնա՝ խավար
Հորում փրթի, էնքան մրնա:
Ու ահագին մի ջաղացքար
Բերավ, դրրավ հորի վրրա:

XXII

Քրնեց էն գիշեր Ձենով Օհանը:
Գիշերն երազում երևաց ծերին՝
Մրսրա երկրնքում արև ճառագած,

Սև ամպ էր պատել Սասմա սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից:
Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՞ց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրա:

Հողե՞մ գըլուխդ, ասավ կընիկը,
Ո՞վ գիտի՝ Դավիթն ո՛ւր է քեֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը ընկած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վերկացավ դարձյալ.

Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրա վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցոլքում դալկացած:

Ի՞նչ եղավ քեզ, մա՛րդ, գիշերվան կիսին.
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուռ եկավ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ երկընքի բարձրը կամարում
Վառվում էր Մըսրա աստղը փառահեղ,

Սասմա աստղիկը սուզվեց խավարում:

Զարթնեց վախեցած: Տունդ քանդվի, կի՞ն:
Ես ո՞նց լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորավ մեն-մենակ մեր ջահելն անտեր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, զենքերըս մի բե՛ր...

XXIII

Ելավ Օհան, գոմը մրտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
Է՜յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասավ,
Կրհասցրնես Դավթի կրռվին:

«Մինչև լուսը կրհասցրնեմ»,

Ու ձին տրվավ փորը գետին.
Մեջքրդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ ես թե՞ նաշին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա էլ երետ փորը գետին.
Զա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կրհասցրնես Դավթի կրռվին:

«Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կրհասցրնեմ Դավթի կրռվին»:
Լեղի դառնա, սև մահ ու ցավ,

Ինչ տրվել եմ քեզ՝ էն գարին:

Հերթը եկավ սևին հասավ.
Գետին չերետ փորը սև ձին:
Է՜յ, ջան Սևուկ, մինչ ե՞րբ, ասավ,
Կրհասցրնես Դավթի կրռվին:

«Եթե ամուր մեջքիս մրնաս,
Ոտրդ դրնես ասպանդակին,

Մինչև մեկել ոտրդ շուռ տաս,
Կրհասցրնեմ», ասավ սև ձին:

XXIV

Սև ձին քաշեց Ձենով Օհան,

Ձախը դրրավ ասպանդակին,
Աջն էլ մինչև շուռ տար վրրան,
Կանգնեց Սասմա սարի գրլխին:

Տեսավ՝ Դավթի նրժույգն անտեր
Սարերն ընկած խրրխրնջալով,
Ներքև Մրսրա զորքը չոքած,
Ինչպես անծեր ծրփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չրպատռի իրեն զոռից,
Կանգնեց Օհան, ամպի նրման

Գոռաց Սասմա սարի ծերից:

Հե՛յ-հե՛յ Դավի՛թ, ո՛րտեղ ես դու .
Հիշի՛ր Խաչը քո աջ թևի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Ու դուրս արի լույսն արևի...

Ձենը գրնաց դրմբդրմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
Հա՛-հա՛յ, ասավ, հորեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում:

Ո՞վ Մարութա Աստվածածին,

Ո՞վ անմահ խաչ պատարագի,
Ձե՞զ եմ կանչել, հասե՞ք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հազար կըտոր,
Կըտորները երկինք թըռան,
Ու գընում են մինչև էսօր:

Ելավ հորից, կանգնեց ահեղ,
Սարսափ կալավ դև Մելիքին:
Դավիթ ախպեր, ե՛կ դեռ էստեղ,

Սեղան նըստե՞նք, խոսենք կարգի՞ն...

Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս եկ մեյդան, կըռիվ անենք:

Կըռիվ անենք, ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:
Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ դաշտի միջին:

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,

Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու էնտեղից եկավ կըրկին:

Երեք հազար լիդր էր քաշում
Հրսկայական իր մրկունդը.
Եկավ, զարկեց, կորավ փոշում
Ու երերաց երկրի գունդը:

Երկիր քանդվեց կամ ժաժք եղավ,
Ասին մարդիկ շատ աշխարքում:
Չէ՛, ասացին, արնի ծարավ

Հրսկաներն են իրար զարկում:

Մեռավ Դավիթ էս մի զարկից,
Ասավ Մելիք իրեն զորքին:
Կենդանի՞ եմ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մրսրա-Մելքին:
Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Տե՛ս, ո՞րտեղից հիմի կրգամ:
Ու վերկացավ, կանգնեց հրսկան,
Իր ձին հեծավ երկրորդ անգամ:

Երկրորդ անդամ քրշեց Հալաբ

Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից:

Եկավ, զարկեց . զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խրլացան:
Գրնա՞ց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց գոռոզ Մրսրա արքան:

Կենդանի՞ եմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՞ հերթն ինձ հասավ:

Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,

Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Երրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, եկավ Դավթի վըրա:

Եկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական,
Փոշին ելավ Սասմա դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր

Փոշին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բոթը տըվին Դավթի մահվան:

Երբ որ անցավ երեք օրը,
Էն ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեգ-մըշուշում:

Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը

Ու տապ արավ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,

Վրրեն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մրոընչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

Առաջ վազեց մազերն արձակ

Մելքի պառավ մայրը ջադու.
Դավի՛թ, մազըս ա՛ռ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ի՛նձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց .
Էս անգամ էլ եկավ քուրը .
Դավի՛թ, եթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.
Էս մի զարկն ու աստված, ասավ,

Էլ մարդ չըգա, պետք է որ տամ:

Ասավ, ելավ ու փոթորկեց,
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կայծակին:

Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,

Օխտը գազ էլ դենը գընաց:

Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,

Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լըսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

Մելի՛ք, ասավ, թա՛փ տուր մի քեզ:
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն:

Էս որ տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կըտըրվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց. Մի՛ վախենաք,

Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչպար մարդիկ, ասավ,
Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՞նչ եք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Ձանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ

Հողագործի օր ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,

Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք եկած ճանապարհով,
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառսուն գազ խոր
Թե ջաղացի քարի տակին,
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,

Սասմա Դավիթ, Թուր-Կայծակին:

Էն ժամանակ աստված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...